ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 փետրվար 2018 թվականի թիվ 19**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 22-ի թիվ 04 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Ֆինանսական պարտավորություն ստանձնելու մասին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը և շինությունը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

3. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

4. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

5. Համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

6. Համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 22 փետրվար 2018 թվականի թիվ 20

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Ծաղկաձոր համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ <<Վարկային համաձայնագիր>>) բխող՝ <<Կոտաքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման և պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակահաըվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ << Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով::

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀՎՀՀ 03001885

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

**22 փետրվար 2018 թվականի թիվ 21**

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՄՇՏԱԿԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Քաղաք Ծաղկաձոր Խ.Կեչառեցու 85 հասցեում գտնվող համայնքային սեփականություն համարվող գույքը՝ 0,38 հա մակերեսով հողամասը և 1040,45 քմ մակերեսով հասարակական շինությունը մշտական անհատույց օգտագործման տրամադրել <<Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 փետրվար 2018 թվականի թիվ 22**

### ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 186-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով`

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի Մայիսյան փողոց, թիվ 9/2 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզում 07-005-0007-0041 կադաստրային ծածկագրով պատկերված հողամասի 0,0074հա մակերեսով հատվածը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ու Մ

## 22 փետրվար 2018 թվականի թիվ 23-Ն

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝

| Հողամասի հասցեն | Չափը | Նպատակային և գործառնական նշանակությունը | Կադաստրային ծածկագիրը | Մեկնարկային գինը |
|---|---|---|---|---|
| ք.Ծաղկաձոր, Վ,Հարությունյան փողոց, թիվ 11/47 | 0,0187 հա | Հատուկ պահպանվող, հանգստի | 07-005-0026-0709 | 845988 ՀՀ դրամ |
| ք.Ծաղկաձոր, Նոր թաղամաս, 4 փողոց, թիվ 2 | 0,06 | Բնակավայրերի, բնակելի կառուցապատման | 07-005-0016-0155 | 2714400 ՀՀ դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 փետրվար 2018 թվականի թիվ 24**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝**

1. Ռաֆիկ Կարապետի Ասատրյանին օտարել քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 9/2 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված 0,0163 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող հողամասը ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում:
2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 734 412(յոթ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր տասներկու) ՀՀ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ու Մ

**22 փետրվար 2018 թվականի թիվ 25**

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով , Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի 2016 թվականի մարտի 10-ի թիվ ՎԴ/1372/05/15 վճիռը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1.Ուղղակի վաճառքով օտարել քաղաք Ծաղկաձոր, Մ. Մկրտչյան փողոց, թիվ 39 հասցեում գտնվող, բնակավայրերի, հասարակական կառուցապատման համար նախատեսված 0.27 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող հողամասը և նրա վրա ամրակայված 263,07 քմ արտաքին մակերեսով շինությունները:

2.Հողամասի վաճառքի գինը սահմանել 31 883 885 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար ութ հարյուր ութսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, շինությունների վաճառքի գին սահմանել 6 155 838 (վեց միլիոն հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր երեսուն ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԱՆ

4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**